



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

7 73000 1502-6
ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԵՏ
№ 68 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 68

ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ԺԱՆՏԱԽՏԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1930



ՀՍՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԸՏ
№ 68 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 68

619.2:616.923

ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ
ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ԺԱՆՏԱԽՏԸ

~~10289~~
A 4339

ՀՅԱՌ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՄԻՍՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՆԲԵՎԱՆ—1930

Հրատ. № 1191

Գրառ. № 3060 (բ.) Պատ. № 225. Տիրած 5000

Պետհրատի 2-րդ տպարանի Յերևանում

ՅԵՂԱՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՏԱԽՅՔ

Յեղշյուրավոր անասունների ժանտախտը ամենավարակիչ հիվանդութիւններից մեկն է:

Ժանտախտը շատ հին հիվանդութիւն է: Շատ տարիներ առաջ ժանտախտը տարածված էր ամեն տեղ, վոչ միայն Կովկասում, Պարսկաստանում, Տաճկաստանում, Ասիայի մյուս յերկրներում, ինչպես հիմա, այլ և ամբողջ Յեվրոպայում, Աֆրիկայում և այլն, վորտեղ անասնապահութիւնն ահագին ավերումներ էր տալիս, և հնարավորութիւն չէր լինում անասնապահութիւնը զարգացնել, տավարի արտադրութիւնը բարձրացնել:

Հենց այդ պատճառով էլ Յեվրոպայի յերկրներն ուժեղ պայքար սկսեցին ժանտախտի դեմ և տասնյակ տարիների պայքարից հետո կարողացան վերջ տալ այդ հիվանդութիւնը՝ ազատելով իրենց անասուններն այդ դաժան թրշնամուց:

Վորպեսզի պարզ լինի, թե անասնապահութիւնն ինչ ահագին վնասներ է հասցնում ժանտախտը, բավական է հիշել, վոր Յեվրոպա-

յուժ միայն 19-րդ դարում ժանտախտից սատկել ե մոտ յերկու միլիոն տավար:

Վերջին 10 տարվա ընթացքում ժանտախտից Հայաստանում սատկել ե 50.000 գլուխ տավարից ավել, այսինքն մոտ 5.000.000 ունամիջական վնաս ե ստացվել այդ հիվանդությունից: Այդ ե պատճառը, վոր վերջին տարիներս խորհրդային իշխանությունը ձեռք առավ կտրուկ միջոցներ, վորպեսզի վերջ արվի այդ ավերիչ հիվանդությանը, կանգ չառնելով վոչ մի ծախքի առաջ, ամեն զոհողություն հանձն առնելով ե լարելով իր ամբողջ ուժը:

Շնորհիվ դրան հենց ներկա տարվա վերջից մենք վերջ կտանք ժանտախտին ե հանգիստ կերպով կանցնենք մեր անասնապահության դարգացման:

Ինչպես վերևը հիշեցինք, ժանտախտը շատ վարակիչ հիվանդություն ե. բավական ե, վոր առողջ անասունը շփում ունենա հիվանդ անասունի հետ, մի տեղ միասին արածի, ջուր խմի, շնչի նույն ոդով, լզի հիվանդ անասունին կամ նրա արտաթորանքը ե այլն, վոր ինքը ես իսկույն հիվանդանա:

Այդպես ել միշտ պատահում ե:

Տասնյակ տարիների ընթացքում նկատված ե, վոր ժանտախտը Հայաստանում լայն ծավալ

ե ստանում ամառվա և աշնան ամիսներին, այսինքն քոչվորների գալուց հետո, և, վոր ամենից դիտավորն ե, ժանտախտն սկսվում ե այն շրջաններում, ուր վոր քոչում են անասունները:

Յերկրորդ աղբյուրը — այդ հարևան Տաճկաստանն ու Պարսկաստանն են, վորտեղ մինչև վերջին տարիներս ել ժանտախտի դեմ վոչ մի կարող միջոց ձեռք չի առնվում, և այդպիսով այդ լերկրները ժանտախտի նկատմամբ շարունակ մի վառվող ոջախ են հանդիսանում: Մակաչն ինչն ե վարակման պատճառը:

Ժանտախտի, ինչպես և բոլոր մյուս վարակիչ հիվանդությունների վարակիչ լինելու պատճառը միկրոբներն են (մանրեններ):

Մանրենները շատ փոքր, հասարակ աչքով անտեսանելի եյակներ են, վորոնց կարելի չե նկատել միայն խոշորացնող գործիքներով — մանրադիտակով (միկրոսկոպ):

Մանրադիտակը, խոշորացնելով հազար և ավելի անգամ, հնարավորություն ե տալիս տեսնել այդ մանրենները: Մակաչն կան այնպիսի մանրեններ, վորոնք ամենալայվ մանրադիտակներով անգամ աներևույթ են: Այդպիսիների շարքին ե պատկանում և ժանտախտի մանրեն:

Այդ մանրելի անհայտ լինելու պատճառով

ժանտախտի վարակիչ նյութն անվանում ենք ժահր (վիրուս), այսինքն վարակող:

Ժանտախտի ժահրը գտնվում է հիվանդ կենդանու մաի, արցան, մեզի, քրտնքի, լորձուկների, թքի, արտասուքի մեջ, նրա ստամոքսում, աղիքներում, թոքերում, կաշվում և առհասարակ նրա մարմնի բոլոր մասերում: Հիվանդ անասունի մարմնի մեջ չկա մի տեղ, վորն ազատ լինի այդ ժահրից, և այդ պատճառով էլ հիվանդ կենդանու մարմնի բոլոր մասերը վարակիչ են առողջ կենդանիների համար:

Ժահրը տարածվում է կամ այն դեպքում, չերբ առողջ կենդանիները շփվում են հիվանդների հետ, կամ հիվանդ կենդանիների կողմից վարակված իրերի ե առարկաների միջոցով, ինչպես, որինակ, խոտի, դարմանի, մսուրների, սուռենների, աղի սալերի, վերջապես զանազան շորերի, փալասների, կարպետների, քեչաների և այլն:

Ժանտախտով վարակվում են միայն չեղջյուրավոր անասունները: Սմենաուժեղ կերպով վարակվում են խոշոր չեղջյուրավոր անասունները— յեզը, կովը, մողինները, հորթերը և գոմեշեղենը: Մանր չեղջյուրավոր անասունները (վոչխարն ու այծը) նույնպես վարակվում են ժանտախտով, բայց անքան թույլ, վոր հիվան-

դուժյան նշանները բոլորովին չեն նկատվում, բացի տաքության բարձրանալը:

Այդ ժամանակ, յերբ խոշոր լեզվուբավոր անասունների մեջ մահացությունը հասնում է մինչև 80—90 տոկոսի, վոչխարների և այծերի մեջ մահացության դեպքերը շատ հազվագյուտ են: Թե ընտանի անասունները և թե վայրի կենդանիները ժանտախտով չեն հիվանդանում: Մարդու համար ժանտախտը միանգամայն անմասն է:

Ի՞նչ նշաններից կարելի չե իմանալ, թե անասունը հիվանդ է: Հիվանդության սկզբնական շրջանը բոլորովին աննկատելի չե: Այդ այն շրջանն է, յերբ ժանտախտի ժահրը մտել է անասունի արյան մեջ, բայց դեռ չի զարգացել, բազմացել:

Ժահրի զարգանալու համար հարկավոր է միջանի որ, միջին թվով 4—9, հազվագյուտ դեպքերում՝ մինչև 20 որ: Այդ շրջանը կոչվում է ծածուկ շրջան, վորից հետո հիվանդությունն արդեն կարելի չե հայտնաբերել:

Այդ շրջանում գնած անասունը բոլորովին առողջ տպավորություն է թողնում, վորովհետև թե տեսքը, թե շարժվածքը, թե տաքությունը միանգամայն նորմալ են: Անասունն ուտում և խմում է, տրամադրությունը լավ է, հիվանդու-

թյան վոչ մի նշույլ անգամ չունի, մինչդեռ հիվանդութիւնը նրա մարմնի ներսում այդ միջոցին սաստիկ զարգանում է:

Այդ ծածուկ շրջանն է պատճառը, վոր գլուղերում հիվանդութիւնը վերջանալուց հետո չել կարանտինը պահվում է եւ 14 որ, վորպէսզի միանգամայն հանգիստ լինել, թե ժանտախտն այս կամ այն գյուղում միանգամայն վերջացել է:

Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ անասնաբույժները միշտ խորհուրդ են տալիս, վոր նոր գնած տավարն առանձին պահվի 10 — 15 որ և միայն դրանից հետո խառնվի հին տավարի հետ: Ծածուկ շրջանն անցնելուց հետո անասունի տաքութիւնն սկսում է բարձրանալ, չորրորդ-հինգերորդ որը հասնելով մինչև 41 և ավելի աստիճանի:

Տաքութիւն բարձրանալու հետ սկսում են յերևալ և մյուս նշանները: Բերանի և աչքերի լորձաթաղանթները կարմրում են, աչքերից, քթից, բերնից սկսում է լորձունք ծորալ, մազերը փշաքաղվում են, գլուխը կախ է ընկնում, ակտնջները նույնպէս: Կենդանին ախորժակը կորցնում է, չի վորոճում, տնքում է: Ստամոքսը խանգարվում է—սկզբում փորը կապվում է, իսկ հետո սկսում է սաստիկ լուծել, ջրալի և արյունախառն:

Անաստունը չերկար ժամանակ պառկած է մնում, բարձրանում է տեղից դժվարությամբ: Յեզները կորցնում են իրենց աշխատունակությունը, իսկ կովերը՝ կաթնատվությունը:

Կովերը հաճախ հորթատում են:

Այդ նշանների հետ միաժամանակ բերանումն էլ չերևում են ժանտախտին հատուկ նշաններ՝ ներքին շրթունքի և թշերի ներսի թաղանթը նախ կարմրում է, հետո ծածկվում բըշտիկներով, վորոնք հետագայում վերքոտվում են և ծածկվում պանրանման շերտով, վորը հեշտությամբ կարելի չէ հանել:

Ընդերքը նույնպես կարմրում, կապտում և վերքոտվում է:

Անասունն արագ կերպով լղարում է և վերջիվերջո թուլանում, հյուժվում և սատկում:

Կազդուրվող անասունները չերկար ժամանակ մնում են լղար և թուլ:

Մի անգամ հիվանդացած և առողջացած անասունն իր կյանքում այլևս չի հիվանդանում ժանտախտով:

Անասունների վրա ժանտախտ յերևալու դեպքում, ինչպես և բոլոր վարակիչ հիվանդությունների ժամանակ, անհրաժեշտ է իսկույն և և՛ թ հիվանդ անասունը հանել ընդհանուր գո-

մից—առանձնացնել, վորպեսզի կարելի լինի ազատել գոնե մյուսներին:

Միաժամանակ անասնատերն իսկույն պետք է հայտնի այդ մասին գյուղխորհրդին, վորն իր հերթին շրջանի անասնաբուժին, իսկ նրա բացակայութեան դեպքում՝ գավհողբաժնին և գավանասնաբուժին:

Բացի դրանից՝ պետք է կարանտինի յենթարկել այն տնտեսութիւնը, վորտեղ յերևացել է ժանտախտ, այսինքն այդ տնտեսութիւնից չթույլատրել վոչ մի գլուխ անասուն դուրս բերել, իսկ պատահամբ տնտեսութիւն յեկած անասունը չթույլատրել յետ տանել: Նույնպես չի թույլատրվում վարակված տնտեսութիւնից դուրս տանել հում միս, կաթ, կաշի, յեղջուր, թրխք, դարման, խոտ և այլ իրեր, վորոնք շրջման մեջ են յեղել հիվանդ անասունների հետ:

Յեթե տնտեսութեան մեջ անասունը սատկի, դիակը, նախորոք կաշին կտորելով, պետք է այրել և թաղել գյուղխորհրդի կողմից հատկացրած հատուկ անասունների գերեզմանոցում:

Վարակված տնտեսութիւնների գոմերը պետք է ախտահանել հետևյալ կերպով.

1. Գոմի մուրները, պատերը և հատակը պետք է լավ մաքրել աղբից և կերի մնացորդներից և լվանալ մոխրաջրով կամ թե կրաջրով.

2. Փայտյա իրերը, լեթե նրանք մեծ արժեք չեն ներկայացնում, ավելի լավ է այրել, հակառակ դեպքում մաքրել և լվանալ մոխրաջրով կամ, ավելի լավ, կարբոլյան թթվի լուծույթով, վորը պատրաստվում է այսպես—մի դույլ (վեղրո) ջրին կես շիշ կարբոլյան թթու:

Բժշկի դալուց հետո բոլոր հարցերով պետք է դիմել նրան և կատարել նրա խորհուրդները: Ժանտախտը չեն բժշկում օջնպես, ինչպես ուրիշ հիվանդութունները: Յեթե գլուղի մի տընտեսութւան մեջ առաջ է դալիս ժանտախտ, գլուղի ամբողջ անասունները պատվաստում են, վորպեսզի նրանք միանգամից հիվանդանան և միաժամանակ առողջանան:


Պատվաստումների յերկու ձև կա. մեկ ձևը շիճուկային պատվաստումներն են, իսկ մյուսը՝ բարդ պատվաստումները, յերբ շիճուկ տալուց հետո տրվում է վարակիւթ, հիվանդ անասունեց վերցրած ժահրային արյունը: Վերջին ձևն ամենանպատակահարմարն է, վորովհետև այս դեպքում անասունները հիվանդանում են և առողջանալուց հետո ալլևս նորից չեն կարող վարակվել, դառնում են վարակամերժ:

Պատվաստումների համար շիճուկը պատրաստվում է հատուկ կայաններում, վորտեղ այդ նպատակով պահվում են միջանի հարցուր գլուխ

յեզներ, և տարվա ընթացքում շարունակ վերցընում են նրանց արյունը և պատրաստում շիճուկ: Այդպիսի կայաններ կան Յերևանում, Վրաստանում և Ադրբեջանում: Մինչև 1928 թիվը պատվաստումները կատարվում էին միայն այն վայրերում, վորտեղ չերևան եր դալիս ժանտախտը: 1928 թվից ավելի լավ համարվեց պատվաստել Անդրկովկասի բոլոր խոշոր չեղջուրավոր անասունները և միանգամ ընդմիջտ վերջ տալ ժանտախտին Միության սահմաններում:

Պետք է ասել, վոր այդ ժրագիրը շատ լավ հետևանքներ տվեց, վորովհետև մահացության տոկոսը սաստիկ իջավ: Առաջվա պատվաստումները տալիս էին 3—4 տոկոս (այսինքն հարյուրից չերեքը կամ չորսը սաստկում էին), իսկ 1928 թվին այդ տոկոսն իջավ մինչև չերկու և 1929 թվին՝ մինչև մեկ տոկոս:

Ճիշտ է, այդպիսի պատվաստումները շատ թանգ են նստում, սակայն խորհրդային կառավարությունը չի խնայում վոչ մի միջոց, միայն թե ազատվենք ժանտախտից և հնարավորություն ունենանք բարձրացնել մեր անասնապահության վորակը, վորի ամենամեծ թշնամիներից մեկն է ժանտախտը:







ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039283

[034]

ԳԻՆԸ 3 ԿՈՊ. ՄԱՍ. (1/2 մասնուկ)

A $\frac{I}{4339}$



Чума рогатого скота

Госиздат ССР Армении
Эривань—1930